համար նշանաբան, ուրիշ բան չըմ ուզի[1]։

Համզայ փահլևան հերոստաւ ու էլաւ, հասաւ Դաւթին։ Էրկուս լէ ղուատով մարդ—հասան, առին իրար, բիրադի ջարտաւ։ Դաւիթ հերսլամիշ էղաւ ու քաշեց Համզայ փահլևնին զարկեց գետին. ու թուր քաշեց, գլուխ կտրեց[2], թուր զարկեց մըչ գլխուն ու դրեց փիջի վրէն ու գնաց։

Գնաց հասաւ Քեռի-Թորոսկի կուշտ[3], հեծաւ ուր ձին, մզրախ զարկեց գլխու մէջ, դրեց վըր փիջին ու գնաց։ Զուրի էրթալն ու գալն քառասուն օր թըմաւ. քառասուն օրն օր թըմաւ, Խանդուիթ խանում հագաւ մարդանակ շոր, հեծաւ մէկ ձի, սիլահ-ասբաբ վրէն կապեց, ուր ախպէր լէ հետ վերցուց ու՝ էկաւ. էկաւ Դաւթի առէջ[4]։ օր էկաւ Դաւթի առէջ, գլուխ տուեց Քեռի-Թորոսկին։

Խանդուիթ խանում քաշեց ուր գուրզ ու Դաւթին գուրզ մի զարկեց։

Դաւիթ մարտալ տուեց գրզի դէմ. զարկեց Խանդուիթ խանում ու ետ դարձաւ փախաւ։

---

[1]) Դաւթի այդ խօսքերին Ա. վարիանտով Համզան նկատում է Դաւթին. «Դու ծուռ Սրգոյ փոկերուց իս»,—դու ծուռ Սարգսի սերնդից(°) ես։

[2]) Ըստ Ա. վարիանտի՝ Լօռայ Համզի գլուխն ու Շապգոնց։ Խորասանու գլուխ կտրեց,—ուրեմն երկուսի դէմ էր կռուում Դաւիթ։

[3]) Ա. վարիանտով Քեռի-Թորոսն էլ օգնում է Դաւթին այս կռուի մէջ. ահա վարիանտի իսկական բառերը. «Էկաւ (Դաւիթ) տեսաւ, օր Քեռի-Թորոս մէկ բանձր տեխ կոյներ ա. ըսեց.—Քե՛ռի-Թորոս, յուդայ մարդ աեսա՞ր փախնող։

Թէ՝—Զըմ տեսեր ի, հմայ քեանի մի ժժմունք իդա ձորու մէջ լցուկ ա։

Էկաւ, տեսաւ, օր Քեռի-Թորոս, ուրնէ շատ արունք էրեր ա։

Ըսեց.—Քեռի-Թորոս, կռիւ ես իմ էրի, արունք դու շատ իս էրի ընձնէ»։

[4]) Ա. վարիանտով Դաւիթ Խանդուիթին պատահում է Ջանգուայ դուրանում։